# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«28» փետրվարի 2017թ.

**Հաստատում եմ՝**
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-20/17 բողոքը քննող
հանձնաժողովին

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լուվէլա» ՍՊԸ-ի 13.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Լուվէլա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Լուվէլա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 2016թ. դեկտեմբերին մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային

ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)՝ երկու չափաբաժինների մասով, որի մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լուվէլա» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով ՀՀ օրենսդրությամբ և հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ բանակցային գործընթացի մասնակցության պայմանները սահմանված են բանակցային ընթացակարգի հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1 որոշմամբ: Տվյալ փաստաթղթով՝ ի թիվս այլ չափանիշների, նախատեսված է «Ֆինանսական միջոցներ» չափանիշը, որը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

«Լուվէլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքներով հայտարկված երկու չափաբաժիններով էլ վերջինս հաղթող չի ճանաչվել՝ նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու պատճառով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են Ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն սահմանվել է անգործության

ժամկետ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«Լուվէլա» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 4 որոշումը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Բանակցային գործընթացի մասնակցության պայմանները սահմանում են պահանջ, ըստ որի մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի ներկայացված գնային առաջարկից, չի հստակեցնում, թե «համախառն եկամուտ» ասելով ինչ պետք է հասկանալ:

Ըստ Ընկերության՝ «Համախառն եկամուտ» բառակապակցությունը տարընկալման տեղիք է տալիս և հարկավոր էր բանակցային գործընթացի մասնակցության պայմաններում հստակ ամրագրել, թե ինչ պետք է հասկանալ «Համախառն եկամուտ» ասելով: Ստեղծված իրավիճակն էլ ավելի է բարդանում գնումների գործընթացը կարգավորող նորմատիվ-իրավական փաստաթղթերում «Համախառն եկամուտ» հասկացության սահմանման բացակայության պայմաններում: Տվյալ դեպքում, ըստ Ընկերության, տեղի է ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը...»: Քննարկվող բառակապակցության սահմանումը ունի ոչ թե ձևական, այլ առարկայական նշանակություն, քանի որ այն ուղղակիորեն կարող է արգելափակել այս կամ այն մասնակցի հնարավորությունը գնման գործընթացի արդյունքներով ճանաչվել որպես հաղթող:

Ընկերությունը նշել է, որ տեղի ունեցած անորոշությունը խախտում է նաև իրավական որոշակիության սահմանադրահիրավական սկզբունքը, որը հանդիսանում է ՀՀ իրավական համակարգի կենսունակությունն ապահովող տարրերից մեկը: Իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ իրավանորմերը իրենց բովանդակությամբ լինեն հստակ, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չտան և իրենց իրավական հետևանքների առումով լինեն կանխատեսելի: Իրավական որոշակիության սկզբունքի

պատշաճ իրացումը հատկապես կարևոր է իրավական պետության պայմաններում, որպիսին ըստ ՀՀ սահմանադրության հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգով «Համախառն եկամուտ» բառակապակցության սահմանման բացակայությունը ամենևին չի բխում նշված սկզբունքներից և խախտում է իրավական որոշակիության պայմաններում գնման գործընթացի մասնակիցներ մասնակցության օրինական ակնկալիքները:

Ավելին, ըստ Ընկերությանը, Ընթացակարգի շրջանակներում մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գնային առաջարկից պակաս չլինելու պահանջի սահմանմամբ խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, որը գնման գործընթացը կազմակերպողից պահանջում է հետևյալը.

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

«Լուվէլա» ՍՊԸ-ն գնտնում է, որ ՀՀ օրենսդիրը վերը նշված չափանիշները սահմանելով, անշուշտ, նպատակ է ունեցել բացառել գնման գործընթացում խտրական պայմանների սահմանումը, արհեստական խոչընդոտների ստեղծումը և մասնակիցներին անհիմն պարտականություններով ծանրաբեռնումը: «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգի մասնակցության պայմանները սահմանելով պահանջ, որ մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի ներկայացված գնային առաջարկից, ոչնչով չհիմնավորված անհավասար պայման է սահմանում համանման ծառայությունը մատուցող երկու տարբեր սուբյեկտների միջև: Անհասկանալի է, թե ինչ օբյեկտիվ հիմնավորումներով է արդարացված նման պահանջի սահմանումը և այդ պահանջի բացակայությունը որքանով կարող էր բացասական ազդեցություն ունենալ գնման գործընթացի վրա:

Ընկերությունը բողոքով նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 4 որոշման ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ «Լուվէլա» ՍՊԸ-ն գնման գործընթացում մյուս մասնակիցների համեմատությամբ թերի է եղել միայն համախառն եկամտի հանրագումարի պահանջի մասով: Այդ իսկ պատճառով համախառն եկամտի հանրագումարի պահանջի սահմանումը պետք է հիմնավորված լինի օբյեկիվ չափանիշներով, որոնք տվյալ դեպքում բացակայում են:

Ըստ Ընկերության՝ խախտվել է «Լուվէլա» ՍՊԸ-ի ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված մրցակցության հավասար և մասնակցության օբյեկտիվ չափանիշների առկայության պայմաններում գնման գործընթացին մասնակցելու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Լուվէլա» ՍՊԸ-ն խնդրել է.

1. դադարեցնել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. փետրվարի 3-ի թիվ 4 որոշումը և «Քլիներս» ՍՊԸ-ի հետ մաքրման ծառայությունների պայմանագրի կնքում:

2. «Լուվէլա» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգին՝ երկու չափաբաժինների մասով:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով 17.02.2017թ. տեղի ունեցած ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է Ընկերության ներկայացրած բողոքն ամբողջությամբ:

## 2. <u>ՀՀ ՊԵԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Կենտրոնը 14.02.2017թ. թիվ 01/04.1/452-17 գրությամբ ՀՀ ՊԵԿ-ին խնդրել է ներկայացնել «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով 17.02.2017թ. տեղի ունեցած ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, ներկայացրել է իր առարկությունները «Լուվէլա» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ:

**3. <u>ԳԲԽ-20/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲԽ-20/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

**1.** ՀՀ ՊԵԿ-ի կողմից կազմակերպվել է «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լուվէլա» ՍՊԸ-ն:

**2.** Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածի «ա» կետով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

**3.** Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի 1-ին չափաբաժին համար առաջարկված ընդհանուր գինը կազմել է 149 378 688 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ 138 329 856 ՀՀ դրամ:

**4.** Պատվիրատուն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 26.01.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Լուվէլա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

**5.** Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 31.01.2017թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Լուվէլա» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելուն (16.01.2017թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմել է 50,118,753 ՀՀ դրամ:***

**6.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2017թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Լուվէլա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ «Լուվէլա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու

տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

**4. <u>ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լուվէլա» ՍՊԸ-ի 13.02.2017թ. ներկայացրած բողոքը, «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից...»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում

մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

ՀՀ ՊԵԿ-ի կողմից կազմակերպվել է «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3» ծածկագրով բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լուվէլա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածի «ա» կետով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի 1-ին չափաբաժին համար առաջարկված ընդհանուր գինը կազմել է 149 378 688 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ 138 329 856 ՀՀ դրամ:

Մինչդեռ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից 31.01.2017թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Լուվէլա» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելուն (16.01.2017թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմել է 50,118,753 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2017թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Լուվէլա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ «Լուվէլա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2017թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժելով «Լուվէլա» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ և պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված պահանջները, քանի որ «Լուվէլա» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (***50,118,753 ՀՀ դրամ***) պակաս է ներկայացված գնային առաջարկից (1-ին չափաբաժին համար առաջարկված ընդհանուր գինը կազմել է ***149 378 688*** ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ ***138 329 856*** ՀՀ դրամ):

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Լուվէլա» ՍՊԸ-ի 13.02.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-20/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան